ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԻՄ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Սուրբ Մեսրոպի առաքեալներ, ուսուցիչներ իմ թանկագին,
Որ կոչուած էք ուսուցանելու եւ կրթելու սերունդներին,
Ձեր գործը սուրբ, միտքը հաստատ, քերթողահօր պէս նուիրուած,
Անմնացորդ մեզ տուեցիք ձեր հիւլեներն իմացութեան։

Սուրբ տառերով երկաթագիր, մանկան լեզուս կապանքներից ազատեցիք,
Եւ հանճարի «Զիմաստութիւնն ու զխրատն» մեզ յաւիտեան ի պահ տուիք,
Ուսանեցինք տարբեր դասեր, առարկաներ ու լեզուներ,
Կեանքի շէմից մուտք գործելուց, որ ունենանք հասուն մտքեր։

Սերմանեցիք ջերմ նուիրում, մեր հինաւուրց հայոց հողին,
Որտեղ տապանն Աստուծոյ կամոք, հանգրուանեց Արարատին,
Հայոց հողի նոր ընձիւղն աւետումն էր՝ ջրհեղեղի աւարտումի,
Նոյի որդիքն մեր սուրբ հողից, տարածուեցին բոլոր ծագերն աշխարհների։

Որքան յուզում, հպարտութիւն, բերկրանք, ցասում մենք ապրեցինք,
Երբ պատմութեան վեհ էջերը Ձեր օգնութեամբ մենք սերտեցինք,
Այնտեղ տեսանք Հայկ ու Բէլի կռուից սերուած «Աւարայր»ներ,
Ստեղծագործ ու բարեպաշտ, Հայի ոգու իւրօրինակ սլացումներ։

Մենք իմացանք, որ աշխարհում առաջինը Հայոց գահը փառաւորեց Քրիստոսին,
Եւ առաջին կաթողիկոս Սուրբ Գրիգոր մկրտելով լուսաւորուեց Հայի ոգին.
Սուրբ Թադէոս առաքեալից մինչեւ Վազգէն ու Գարեգին,
Մեր հաւատքին պաշտպան եղանք, որ չձուլուենք բիրտ ցեղերին։

Ու հնամեայ խորաններում խունկ ծխեցինք դրախտաբոյր,
Կառուցեցինք բազում վանքեր, «Մայր Տաճար»ներ աստուածաբոյր,
Որ փորձութեան ահեղ ժամին նա մեր ազգին սատար կանգնի,
Իսկ մեր կեանքի խաղաղ պահին նա մեր հոգին մաքուր պահի։

Եւ մենք տեսանք եղեգան փող, երկնեց Վարդան ու «Գայլ» Վահան,
Նոյն եղեգը ծնեց Նժդեհ, քաջ Անդրանիկ ու Բաղրամեան,
Լեգենդ դարձած Մոնթէ ծնեց մեր Թորգոմայ տնից հեռու,
Որն իր կեանքը հերոսաբար պիտ աւանդէր նախնեաց հողում։

Ու աւետեաց մեր երկիրը բազում հանճար՝ որդիք տուեց,
Խորենացի, Նարեկացի, Իսահակեան, Չարենց ծնեց,
Երկնեց Մոմիկ, Մանուէլ, Տրդատ, խաչքարերին հոգի տուող
Թորոս Ռոսլին, Սարգիս Պիծակ, Սարեաններին ոգեշնչող։

Շիրակացուն Հայն արարեց Ծիր Կաթինը ըմբռնելու,
Համբարձումեան, Ալիխանեան տիեզերքը թափանցելու,
Ողջ աշխարհին հիացրեց Գայիանէի պարը ճկուն,
Տղաների բերդը խրոխտ, Կոմիտասի երգը թախծոտ։

Պատգամեցիք աշխարհասփիւռ, Հայի դատը միշտ վեր հանենք,
Երկու միլիոն եղեռնական զոհուածների Պատարագին զանգ ղողանջենք,
Չհանդուրժենք կեղծիք, ոճիր, վատին նորից դարձի բերենք,
Ու մեր խելքով, աշխատանքով, մանկուրտ թուրքին ծնկի բերենք։

ՍԱՄՈՒԷԼ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

2025

ԵՐԱԶ ԱՆԲԱԺԱՆ

Քանի՜ տարի, քանի՜ դարեր, ես չեմ գիտեր,
Ամէն գիշեր, միշտ նոյն ժամուն, երազը նո՛յն
Ես կը տեսնեմ յամառօրէն եւ աննըկուն...
Երազը նոյն զիս կ՚օրօրէ՜ ամէն գիշեր։

Միշտ կը տեսնեմ թէ մարմնով բոց եւ անվեհեր
Ես կը քալեմ ա՛լ հնացած ու մթագոյն
Այն փողոցէն խորհրդաւոր, ծայրը որուն
Տնակ մը գորշ զիս կը սպասէ հնուց ի վեր։

Եղե՞մս է այդ թէ փոսրս մութ... չեմ գիտեր ես...
Միայն գիտեմ թէ հոգիս լուռ՝ երջանկածէ՛ս
Կ՚ելլայ յանկարծ, ի տես հիւղին հին ու լքուած,

Դռնակն որուն, քայլերուս դէմ մնաց միշտ փակ։
Ու ես անվերջ, ամէն ճամբէ, աչքերըս բաց՝
Երբ կը քալեմ, կ՚երազեմ հի՛ւղն այդ անբնակ։

Ե. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

1945